

Ի Ա Ռ Ե Ն Գ Ի Ն

ՄԻԼԻՐԱՆ 60 դ. ոսկեր.
ՎԵՅԱՄԱՆՈՒՄ 35 »
ԱՐՏԱՆՈՒՄ 4 ոսկեր
ՎԵՅԱՄԱՆՈՒՄ 2,50 »
ԻՄԱԿ ԼԵ ՊՐԱԿ 1 Աճգ. ոսկի

Հասցի, փոփոխութեան համար
պետք է վճարել 3 ֆրանքս

ՉԵՌՔԷ ՀԱՏԸ 3,50 Ղրուշ

ԱԶԳԱԿ

Հ Ա Յ Ա Թ Ե Ր Թ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Հ Ա Ր Ա Թ
27
Ա Պ Ր Ի Լ
1929

«AZTAG»
JOURNAL ARMENIEN
B. P. 587
BEYROUTH, GO. LIBAN

ՏԻՐ ԵՆ ՏԵՂԵՐԻ Է. ՊԱՆԿՆԱՆ

Գ. ՏԱՐԻ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵԴՇԱԲԻԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

ԹԻԻ 191

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ

Համաշխարհային ուղեւոր ընթացքին վայրագ ու արեւելահայ
բնակավայրերը, հայ ժողովուրդի մարտիրոսացրած թեան պատ-
մութեան ուղի բացաւ էջ մը, որ անջնջելի պիտի մնայ իւրաքանչիւր
հայու յիշողութեան մէջ:

Միլիոնի մօտ մեր հարազատները, անօթի ու ծարաւ քայլել
վերջ ուտաստիտ անապատներու մէջ, յանկարծ խամրեցան աշնան
տերեւներու հման և անշիւրիմ ինկան էրզրումէն մինչև Սըվազ և
Միջագետքի առաջուտները, հսկայական դամբարանի մը վերածելով
այդ ընդավ ձակ տարածութիւնը:

Հայ կոյսեր իրենց պատիւը յանձնեցին եփրատին ու Տիգրի-
սին՝ ազատուելու համար վայրագ ու անողորմ թշնամի խենէշ
բազուկներէն: Հայ մայրեր իրենց անգոր մատներով աչքերնին
կուրցուցին՝ չի տեսնելու համար իրենց սրտահասօրներուն սրա-
խողիւղ մարթոմուսը:

Ջախջախուած գանկերը մեր մտաւորականութեան և փոշիա-
ցած ուկերները մեր լաւագոյն սերունդին դեռ անապատներուն
վրայ հուլմանաւ տարածուած կը մնան, իրեն նախատինք քաղա-
քակիրթ մարդկութեան:

Մարդկային գրեթէ անշուք է պատկերացնելու այն զգայա-
ցունց և զարնուրելի ոճիւր և երեւակայնու այն զոհուելի և հրէշա-
յին սուսմը որ դա՛նձնեցրը խաղաղին մեր ամբողջ ժողովուրդի գլխին,
երեք տարի շարունակ:

Անարգ դա՛նիճը, դարձուրելի դիշեր մը անողորմութեան կտրեց մեր
մտաւորական կ'անքի ջիւղը: Անգամ մըն ալ չի վերադարձուելու
պայմանաւ իրենց սիրելիներուն գրկէն յափշտակուեցան մեր
ընտերեղոյն ներկայացուցիչները, որոնք մտածեցին ու զգացին
ազնուացնելու համար մեր ժողովուրդը, քարոյցեցին բառձր սկզբ-
ունքներ, երգեցին ցեղին մարտական ոգին ու վերուէր ապրում-
ները և դեռ չի տեսած յաղթանակը իրենց պայքարներուն, կիզիչ
անապատներու մէջ անգործութեան մահացում:

Անոնք — յարգանք իրենց պաշտելի յիշատակին — հայ ժո-
ղովուրդի բարձրացման և ազատութեան նուիրական իտէալով ա-
ռաջնորդուեցան, քալեցին միշտ յոյսով ու յափշտակութեամբ և
զոհուեցան իտէալին համար:

Եւ ամէն տարի Ապրիլ 24ին, մենք պարտաւորուած ինչ կ'զգանք
ողեկոյնելու յիշատակը մեր այն սերունդին, որոնք զաւաճանքին
մարթոմոսեցան և որոնց իտէալները աւելի ինքնաբերուելի ու բարձ-
րախօսիչ էին: Պարտաւորութիւն կ'զգանք զէթ ստրին մէկ անգամ
մեր ներկայ սերունդի տեսողութեան առջև պատկերացնելու ըս-
պանդի ու զուլումի այնքան սրտակեղծ տեսարանները, որոնց
անխնայօրէն ենթարկուեցան մեր բանաստեղծներէն, վիպագիր-
ներէն և գործիչներէն սկսած մինչև ծծկեր երեխաները:

Մեր նահատակներու աննւթական շիրիմներուն առջև ար-
ցունք թափելու և անոնց կորուստը սգալու համար չէ որ Ապրիլ-
եան նահատակներու Յիշատակը կը ածուել ամէն տարի հանուր
հայութեան կողմէ և իւր համագոյսին սգատօն սրբադործուած է
Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ասանձին կողմակցութիւնը: Զոր-
հուրանքներէ ու մտալիկութեան վերջ աշխարհասփիւռ հայութիւնը
պէտք է ածնէ Ապրիլ 24ը, ներշնչուելու համար իւր նահատակ-
ներու իտէալին ու Հաւատքէն և շարունակելու անոնց կիսատ թո-
ղած գործը մեր ցեղի քաղաքակրթութեան և յառաջդիմութեան
համար:

Անօգուտ է և անարդիւնք արցունքն ու լացը, եթէ այդ Մեծ
Վարպետներուն կորուստը չ'սթափեցնէ մեզ և մենք յամառնք
դեռ պառակտումներ սերմանել այս դժբաղդ ժողովուրդին մէջ: Ա-
մէն տարի Ապրիլ 24ին, իւրաքանչիւր հայ պէտք է յիշէ Հայոց
Հայրիկի «Երկաթեայ Երեւոյթ» նորման պատմութիւնը և որչէ
հասարակ աշխատանքի լծուել նոր յուսարարութիւններու և նոր
գործադրութիւններու չննթարկուելու համար:

Այս համագոյսին սգատօնը, մեր ներկայ և գալիք սերունդնե-
րուն համար պէտք է ըլլայ ինքնաբերութեան և ինքնամփոփումի
օրը: Շատ նուիրական աւանդ մը ձգուած է մեզ, պէտք է պրկենք
մեր ուժերն ու կարողութիւնները և հաւատարմօրէն քալենք այդ
ճանապարհէն, որու հանգրուանն է մեր ժողովուրդի Ազատութիւնը:
Արցունքն ու ողբը բաւ կան չեն յաջողութեան համար, նոր զոհեր
և նոր զերեկամաներ չունենալու համար պէտք է հետեւինք Հայրիկի
խրատին, որ, թէպէտ ուշ, հայ ժողովուրդի ազատագրութեան համար
մարտնչող սերունդին իւր նշանաբան ծառայեց:

Յարգանքի սրագլին հարկ ունինք վճարելիք հայ ժողովուրդի
ազատագրութեան իտէալին առջև նահատակուած մեր միլիոնի մօտ
մեռելներուն: Տարին մէկ օր միայն, Ապրիլ 24ին, պէտք է ամ-
փոփուինք անոնց նուիրական և անտեսանելի շիրիմին առջև և
ուխտենք հաւատարմի մնալ անոնց պատգամներուն:

Եւ ան ոչ չի յարգեր իւր մեռելներուն յիշատակը և չի ածնէր
անոնց սգատօնը, կ'անարգէ ցեղին կրած տառապանքը և չի հա-
ղորդուի անոնցմէ:

Պէտք է վճարենք այսօր մեր յարգանքի տուրքը:

Համբու ՆօթերԹրֆօ Սիւրիական Սահմանէն

(Մասնաւոր Թղթակցութիւն)

Հ Ա Ր Ա Պ Լ Ո Ւ Ս

Հայկական 180 քիլոմէթր զեպի
հիւսիս, եփրատի վրայ երկաթի
հակա կամուրջ մը յանդուգն չաղ-
կապով մը իրար կը միացնէ Շամի-
յէն ու Ճէզիրէն:

Ճարտարուեսի կամուրջն է այս,
հոս նաեւ համաժողովուրդի քաղաքը:

Կամուրջը ամբողջութեամբ կը
պատկանի թիւրքերուն ու անոր
Շամիյէի ծայրը կը վերջանայ հոս՝
ուր Սիւրիական սահմանը կ'սկսի
և ուր Քրտանայի գիւնդը մը իւր
սիկառը կը վառէ թիւրք պահակի
կրակէն, այնքան մօտ են անոնք
իրարու:

Խաղմական տեսակետին թեկեւ
անարժէք դիմումը այս կամուրջին,
անտեսանելիութիւնը մեծապէս կը վը-
նասէ Սիւրիոյ, որուած ըլլալով որ
եփրատի վրայ կ'ընկնէ երկաթի կա-
մուրջը՝ Տէր Զօրինը, 350 քիլոմէթր
հեռու է սակէ, իսկ այդ երկար
միջոցին վրայ, նախնական յատար
միայն կը գործածուին սրպէս փո-
խադրութեան միակ միջոց:

Թրքո-Սիւրիական սահմանը ճա-
րտարուէն կ'երկարի երկաթուղիին
հետ սակի քան 850 քիլոմէթր,
մինչև նոսեղային ու անկէ քիչ մը
անդին մինչև Տեմիւր Քարու ուր կը
միանայ Անկար-Թրքական սահմանին,
Մուսուլի գրեթէ 50 քիլոմէթր մնա-
ցած:

Երկաթուղին ամբողջութեամբ կը
պատկանի թիւրքերու և կը կազմէ
սահմանադիրը:

Յետեւ երկաթուղիին քառակէն
և աստուակէն 25 ոտք միայն բաց-
ուելով ու միշտ անոր գագաթնայ,
ինքնաշարժի ուղի մը հիմա կը հե-
տադիպէ երկաթուղին մինչև սահ-
մանադիրը: Այս ալ է գլխաւոր
ճարտարութեան գիծը Սիւրիացի-
ներուն, որոնցմէ քիչեր միայն ա-
մենամահաբաժնու պարագային կը
համարձակին իրենց ճարտար-
թիւրքը միշտ անմիտանելի է. ու
որքան ստեղծ է ճշգրտած ու վեր-
ջացած սահմանային խնդիրը, աւե-
լի զգուշանք են մարդիկ:

Դեռ քանի մը ամիս ստալ ալ
երկու հայ ճարտարներ վար անը-
ւած են թիւրքերու կողմէ ու տար-
ուած են մինչև Սիւրիա ուր լաւատի
և չարքաւորութիւն քանի մը անտես-
չըջանէ մը վերջ վերադարձած են

Հայկական կիսամեծ փոխակով:
Ամէն անգամ որ սահմանային
վէճ կը յարուցուի, սահմանին վը-
րայ առաջնակային զեպիքը յաճա-
խակ կը դառնան:

Այստեղ՝ Ճարտարուեսի մէջ, պա-
տեարգի միջոցին քանի մը չէնքեր
միայն կային ու երբ թրքական
բանակին եփրատի վրայէն նստա-
կութեամբ խոխաղութիւնը իրար
հակառակ, անհրաժեշտ դարձաւ ճա-
րտարուէր դարձաւ կարեւոր վայր մը
ուր թիւրքերը ձեռնարկեցին մեկ-
գլխեկու. չինութեանց և ուր լաղ-
մաթիւ տարապիւր հայեր աշխատե-
ցան իրեն ամիւր:

Եփրատի ստացած այդ կարեւո-
րութիւնը, պատճառ եղաւ բաւա-
կան հայ արհեստանոցներու ծար-
կառախելուն, որովհետեւ եփրատի
ամբողջ երկաթեային հարկ եղաւ չի-
նեյ նման գիւնդարական կայաններ
և հանգրուաններ, ինչպէս «Մէսքէ-
նէ», «Ալաշէրէք», «Համամ»,
«Զիլարէթ», «Սուպրա» են և իւ-
րաքանչիւր վայրի մէջ 60-70 հայեր
մնացին իրենց ընտանիքներով, իւ-
րեւ տեսակ մը ամիւր քաղաքի:

Ճարտարուէն Պարտաւորութեան
չափերը (յատու) իրեն փայտ
կը գործածուէին Պարտաւոր մէջ,
կարելի չըլլալով յետադարձ նա-
ւարկութիւնը ու ժախքութիւնը
Պարտաւորութեան քաղաքի կը դառնային
ճարտարուէն մէկ ամիւր:

Անոնք ճարտարուէր այսօր
գործած է կատարեալ քաղաք մը,
բացառաբար հայ զաւթականներու
չնորմի, որոնք 300է աւելի հողա-
չէն տնակներ կառուցած են իրենց
համար, կոկիկ ու կանոնաւոր:
Ջարտարուէն են չափան և ստե-
տար: Շրջակայ քաղաք թրքական
գիւղերն ու քաղաքները Պէրճիկ,
Սուրաճ են իրենց աստուար կ'ը-
նեն ճարտարուէն:

Եւ անոնք թիւրքեր չափային մէջ,
հերմակ վարտիքներով, եւմէնինե-
րով, լալայ գլուխին գլխակի...:

Թիւրք գիւնդարներ նոյնպէս ու
բանք կազման տեսուր ընկաւ և
որոնք քաղաքին մէջ չիկ երեւոյթ:
Համար իրենց ընկերով նոր հա-
զատար փոխ կ'անեն ու կը հաղ-
նին...: Միշտ միեւնոյն թիւրք
գիւնդար, ժաթիթ քանի մը տե-
սակի ու ձեկ կոճակով, բանթօլը
մաշած ու կարկառուած, գլուխը
գլխակի նմանող գլխանայ մը և
մատ մը մարտք...: Կատարեալ
մէջմեծութիւն:

Կինքը՝ որոնք երկու փէշէ միան-
գամայն աշխի իրենց երեսին:

Ու կը թուի նոր այս կենդանի,
տարապիւր ու երեւոյթներուն, թիւրք-
փոխ մէջ, Պօլսոյ, Իզմիրի, Իզմի-
թի և չըջանի ու Անգարայի թիւրք-
քանի են միայն ընտելացած:

Աչքի կը գառնէ ուրիշ աւելի
կարեւոր երեւոյթ մըն ալ:

Ըսի թէ Պէրճիկ են իրենց ա-
ռատար կ'ընեն ճարտարուէն,
Սիւրիայի և իւր ամբողջ չըջանի չա-
կան ալ կը դառնայ Արապ-Բուսա-
ր: Թիւրքերը մասնաւորաբար կը
գնեն տունակէն, կերպարեղէն, մե-
տաքեղէն են ետապատիկ գնով
քան ինչ որ կ'արժէ օրինակ Հայկ-
ցի կամ Պէրճիկի մէջ...: Անոնք
նպատակ կ'աչ ինչ հաղուտի որոն
մատար թիւրքերն արդիւրած ըլ-
լով հանդերձ հազարաւոր հարա-
նիքով փախուսական կը տանին՝
մեծ քանակութեամբ:

Թիւրքերն ամենող ամէն սպար-
ման մարտերու է ենթարկուած:
Ամենափոքր քանակութեամբ կեր-
պուս մը սահմանէն անցնելու համար
թիւրք կ'ընեն իրենց չըջագե-
տին հախանիլի ու ծիծեղուտ ապա-
հովութեան կը վստահին...:

Ճարտարուէի մէջ ունինք մօտ
250 տուն հայ, ընդհանրապէս Պէ-
րճիկցիներ, հայերն հազու թի
կը հախանին, կը խօսին արաբերէն
և քրտերէն:

Տեսող գոյուրը, ընդարձակ գոյ-
տի մը վրայ բաւական ընդարձակ
սրահ մը որ եկեղեցի է միեւնոյն ա-
ռան, ոչ գրադարան, ոչ գրադարան,
իրեն նստարանն ու գրադարան իւ-
րաքանչիւր աշակերտ ունի երկու
կապի սնուակ, որոնցմէ մէկուն վը-
րայ կը նստի իսկ միւսին՝ կը գը-
րէ...:

Երկու ուսուցիչ մէկ ուսուցչու-
նի, նաեւ քանանին իւր պարագ մա-
մուրն իրեն աղպարին:

«Աղպար մօլոմօլոյին աղպար
եկեղեցին և աղպար վարձարանը»
կ'ըսէ քանանին:

«Ձեռք մը կը տանինք» կ'ըսեն
ուսուցիչները:

Մօտ 150 երկուս աշակերտ ման-
կապարտէզի բաժնով մէկուկ իւր-
ճոցուած և ինչ պատկեր կիսամերկ,
բոլորի կամ թաղաւոր պարագային
լալընկերով...: Չարաճիքի, ունին
նայումքներով առաջ ու կայտաւ
աղպարի բոլորն ալ:

Շալար ծայրին իրենցով պիտի
ճէն հաղու. թէ կը գոցեն ու երախ-
տապարտ են որ Բարեկործաններ
այս ատրի ալ քանի մը սակի նը-
պատի խոտուտ ըրած է և Թ:

ՍԵՂՐԱԿ ԾՈՎԻԿԵԱՆ

Օրինաւոր մարդն էր. արժանա-
պասիւ, եւ այսպէս դասուած քա-
րեկամներէն, բեւամիներէն: Կը գը-
րուէր, չէր գրէր: Անկեղծներուն մէջ,
անկեղծը հագուաւորէր: Միտքը հիւս-
ուած ազգին սիրով, սիրք լեցուած
ազգին վրով: Շեմարան բարո-
քեան. պահանջող արդարութեան, եւ
արդար դասախաղ մալի հանդիպ
անձին, վերջը ուրիշին:

Միջամտող հո՛ն, ուր կը ծեսներ
ազգին շահը, ուր կը լսէր ազգին
ձայնը, ուր կը բարախէր ազգին
սիրքը: Կը վիճէր, կը վնդէր եւ լա-
զգութեամբ կը նետուէր հոն, ուր
հարկ կը ծեսներ վնասալին քաղա-
քներէն, յուսահատին խախտոյր,
հալածուածին պատկարներէն:

Կը խուսափէր պատ ի պատ խոս-
տմանէն: Խօսքին եւ գործին մէջ
միշտ վնասական, միշտ ասպետական:
Իր խօսքերը գործերուն չէին հակա-
սէն:

Համեստ էր մեծով եւ օրով մեծ
համեստներուն հետ: Պատկառելի ան-
պատկառ փոքրամիտ մեծերուն հետ:

Տակաւին դեռասի պատանի,
պատանակեցան կ'ըլլար, իր ընկեր,
իւր փոքր անդամիկ Գեորգիին,
որ ապրատու դաշտում ձիւն վար
կը քաղալէր Համեստն ուսիկանա-
պէս: Հոն, Պապայի ճապարա-
կին մէջ, յեղափոխութեան առաջին
դրօշակը պարզուեցան մեկն ալ
ինքն կ'ըլլար:

Սեբասթիայի աստուծոյ դառնա-
լուն, Դաւանակեցական շաբաթուն մէջ,
ձանթ անձանթներէն կ'ըլլար եւ
գործօն գործիչներէն:

Պոսէն Միլան, իր տալի եւ ձեռի
գործանուններուն մէջ կը բաւուէր:
Արդանեան ընթանիքին իր թիկին
հարսին եւ զաւակներուն հետ նեղ
կ'ապրէր, նեղ ապրողներուն ձեռ
կ'ընէր:

Հայաստանի առաջին պատգա-
մաւորները կը հիւրասիրէր իր ամբ
մեջ, եւ Հայ Հանրապետութեան դը-
րօք վեր կը բռնէր առանց վանա-
ւակներ ծայտաբերան:

Ինձի հետ կը սպառէր, բայց չէր
յուսահատէր: Ինձի կ'օգնէր, ինձի կը
մղէր, ինձի հետ Միլանի հայերուն
օրին դուր կը գառնէր եւ կը դը-
րուէր Միլիթարեան սրահոցին հիւր:

Արդ, անխուսափելի հանգստա-
րանին մէջ անոր անբողբոք շփուկ
կ'ողբայ սգակիր ընթանիքի եւ այս
սուրբ ստորագրով սգակից բարե-
կամը:

Հ. Ս. ՆՐԻՄԵԱՆ

Via Dimesse, 1. Padova

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Մեր կամքէն անխախ պատ-
ճառներով, «ԱԶԳԱԿ» մօտ երեք
ամիս չի կրցաւ լոյս տեսնել: Այն
լուրը բաժանորդները, որոնց
բաժանորդագրութեան ժամա-
նակաշրջանը չէր լրացած, իրա-
ւունք պիտի ունենան ԱԶԳԱԿ
ստանալու:

Այս առթիւ խմբագրութիւնն
կը հիշեցէ կարգ մը տեղական
թերթերու մէջ երեւցած այն լու-
րը թէ՛ Հանրապետութեան Նա-
խագահին հրամանով «ԱԶԳԱԿ»
ստանալու կախակայուած է:
Ոմբ սգրութիւնս երեք չէ ըս-
տացած կախակայման նման հը-
րամանադիր մը:

“ ԱԶԳԱԿ ” Ի ՏՊԱՐԱՆԸ

ՄԵՐ ՆՈՐ ԽՍԲԱԳՐԱՏՈՒՆԸ
ԿԻ ԳՏՆՈՒԹՅԱՆ ՊՐԱՏՈՒՆ ԵՒ
ՏԵՂԵՐԻ ՓՈՂՈՑԻՆ՝ ՄԵՋ «ՄԱԹ-
ՊԱՆ ԵՒ ՎԱՍՍՆԻՆ» ՏՊԱՐԱՆԻՆ
ՄԵՋ:

